ԿՐԹԱԿԱՆ

# ԹԱՄԱՐ ՍԱՆԻԿԻՁԵ. «ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ ԶԳԱԼԻՈՐԵՆ ԿԱՎԵԼԱՑՎԻ»

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

Սեպտեմբերին բազային աշխատավարձը կավելացվի 50 լարիով, կավելացվի նաեւ կատեգորիայի հավելավճարը: Եթե բազային աշխատավարձը կազմում էր 305 լարի, կդառնա 355, իսկ ապրիլին՝ այդ գումարը կավելացվի եւս 50 լարիով եւ կկազմի 405 լարի: Դա նշանակում է, որ ուսուցիչների միջին աշխատավարձն ավելացվում է, միաժամանակ ավելացվում է նաեւ հավելավճարը, որի մեծությունը կախված կլինի ուսուցչի որակավորումից:

*- Դպրոցներում ե՞րբ կսկսվի ուսումնական տարին, քանի՞ առաջին դասարանցի է գրանցվել, եւ ե՞րբ կսկսվի առաջին դասարանցիներին նոութբուքերի ու, ընդհանրապես, աշակերտներին դասագրքերի բաշխումը:*

- Նոր ուսումնական տարին կմեկնարկի սեպտեմբերի 14-ին: Այսօրվա դրությամբ, հանրային եւ մասնավոր դպրոցներում, ընդհանուր առմամբ, գրանցվել է 46 660 աշակերտ: Դասագրքերն ու նոութբուքերն աշակերտներին անմիջականորեն կտրվեն դպրոցներում: Նոութբուքերը նախատեսված են առաջին դասարանցիների համար: Այն կիրարկվելու է չորս տարի, ուստի իրականացվում է ծրագրերի վերանայումը:

*- Ինչպես տեղեկացված ենք, 2016-2017 ուստարում, ազգային ուսումնական ծրագրում կկատարվեն փոփոխություններ: Ի՞նչ նորամուծությունների մասին է խոսքը:*

- Ազգային ուսումնական ծրագրում հիմնական փոփոխությունները կիրականացվեն հաջորդ ուսումնական տարում, կհայտարարվի դասագրքերի կազմման մրցույթ, կսկսենք նոր դասագրքերի մշակումը:

*- Հետեւաբար, ստացվում է, որ հաջորդ ուսումնական տարում աշակերտները 100 տոկոսով կապահովվեն նո՞ր դասագրքերով:*

- Դա կախված է նրանից, թե ինչպես կներդնենք նոր ծրագիրը: Եթե այն կիրարկենք առաջին չորս կամ առաջին երկու դասարաններում, բնականաբար, դրանք կունենան բացարձակապես նոր դասագրքեր: Կազմելու ենք ներդրման փուլերը, հայտարարելու ենք մրցույթներ, դասագրքերի հեղինակները գնահատման համար դրանց նմուշները ներկայացնելու են նախարարությանը, եւ լավագույններին կշնորհենք համապատասխան գրիֆներ: Գտնում ենք, որ յուրաքանչյուր առարկայի հաշվով առնվազն պետք է լինի երկու այլընտրանքային դասագիրք:

*- Մի քանի ամիս առաջ, Դուք հանդես եկաք դպրոցներում ավարտական եւ ազգային քննությունների միավորման նախաձեռնությամբ: Ի՞նչ է արվում այդ ուղղությամբ նախարարությունում:*

- Բնականաբար, գերատեսչությունում դրա շուրջ աշխատում են: Որոշակի տեղեկատվություն ենք սպասում քննությունների ազգային կենտրոնից, որի հիման վրա էլ կազմելու ենք համակարգի ֆինանսավորման մոդելը: Միայն դրա մշակումից հետո, ձեռնամուխ կլինենք ազգային քննությունների համակարգի վերանայմանը:

*- Կրթական ոլորտի փորձագետների նշանակալից մասը խոսում է քննությունների համակարգի վերանայման անհրաժեշտության մասին: Ըստ ձեզ, որքանո՞վ են անհրաժեշտ համակարգի փոփոխությունները:*

- Նախ, հարկ է փոխել համալսարանների ֆինանսավորման համակարգը: Ներկա դրությամբ, մենք միմյանց հետ առնչում ենք ֆինանսավորումը եւ քննությունների համակարգը: Նախ, պետք է կենտրոնանանք ֆինանսական համակարգի վրա, ապա կարգավորենք ազգային քննությունները: Գտնում ենք, որ ազգային քննությունները պետք է լինեն մեկ կամ երկու, ներկայիս համակարգի օրինակով բաժանվեն դպրոցական եւ բարձրագույն մակարդակների վրա: Թեպետ հարցականներ կան, թե ինչ տեսքով է դա արվելու: Այդ մասին կարող ենք խոսել համապատասխան մոդելի մշակումից հետո:

*- Այն պայմաններում, երբ առկա է դիմորդների որոշակի քանակություն, որոնք ազգային քննությունների արդյունքներով դուրս են մնում բուհերից, ինչպիսի՞նն է պրոֆտեխուսումնարանների պահանջարկը:*

- Ողջ պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ շատ բան է արվել մասնագիտական կրթության համակարգում: Հարկ է ուժեղացնել մասնագիտական կրթության քարոզչությունը: Հիշեցնեմ, որ խորհրդային ժամանակներից մեզ հասած պրոֆտեխուսումնարանների համակարգը անուշադրության էր մատնվել, եւ նոր է այն սկսել իր վերածնունդը, չէ՞ որ մասնագիտական կրթություն ունեցող անձանց վրա է հիմնվում երկրի էկոնոմիկան: Այդ ոլորտում ներդրեցինք նոր մեթոդաբանություն: Պրոֆտեխուսումնարաններում ուսուցումը անվճար էր, ինչն էլ ապահովում էր դրանց մատչելիությունը: Ինչ վերաբերում էր դրանց մակարդակին, ապա նշեմ, որ 2013-ին այն համեմատաբար ցածր էր, եւ մենք հատուկ ուշադրություն հատկացրինք այդ հարցին: Արդյունքում, պրոֆտեխուսումնարանների նկատմամբ պահանջարկը մեծանում է:

*- Խոսենք նախադպրոցական դաստիարակության հաստատությունների մասին: Գիտենք, որ մշակվել է հատուկ ծրագիր: Ինչպե՞ս է իրականացվելու այդ ծրագրի ներդնումը:*

- Երկրի բոլոր մանկապարտեզներում, որտեղ կան համապատասխան տարիքի երեխաներ, այդ ծրագիրը կներդրվի: Սակայն, քանի որ Թբիլիսիում առկա են ենթակառուցվածքային հիմնախնդիրներ, մենք այդ նպատակով օգտագործում ենք դպրոցական ենթակառույցները, որտեղ հնարավոր կլինի ներդնել վերոնշյալ ծրագիրը: Այդ նպատակով նախատեսել ենք Թբիլիսիում 50 հանրային դպրոցների տարածք: Ինչ վերաբերում է տարածաշրջաններին, ապա դրանցում նման հիմնախնդիրներ չկա:

*- Իսկ ի՞նչ է դասավանդվելու երեխաներին:*

- Երեխաների ուսուցումն իրականացվելու է խաղերի միջոցով: Վստահեցնում եմ, որ ուսումնական տարվա համար մանկապարտեզի երեխաները շատ ավելի նախապատրաստված կլինեն: Գրել-կարդալ չեն սովորի, սակայն կյուրացնեն երեք ունակություններ, որոնք կնպաստեն ճիշտ գրել-կարդալուն: Ծրագիրն ամենօրյա է, նախատեսված է ամեն օր երեք ժամ: Ծրագիրը կմեկնարկի հոկտեմբերին եւ կավարտվի մայիսի վերջին: Առաջնային գրանցումը իրականացվել է, սակայն յուրաքանչյուր մանկապարտեզի եւ դպրոցի համար մանկապարտեզների գործակալությունը սեպտեմբերից նոր գրանցում կիրականացնի: Ծնողները կկարողանան իրենց երեխաներին գրանցել ըստ բնակության տարածքի:

# ՈՂՋՈ՜ՒՅՆ ԴՊՐՈՑ, ՈՂՋՈ՜ՒՅՆ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

Հետեւում մնացին ամառային արձակուրդների արեւոտ ու անհոգ օրերը. շուտով՝ մի քանի օրից, հանրապետության բոլոր ուսումնական հաստատություններն իրենց դռները կբացեն հազարավոր աշակերտների եւ ուսանողների առջեւ, առջեւում 2015-2016 ուստարին է:

Նախքան նոր ուսումնական տարվա խնդիրներին անդրադառնալը, հետադարձ հայացք գցենք անցած ուստարվա հաջողություններին ու ձեռքբերումներին:

Ախալքալաքի շրջանի 65 դպրոցներում սովորում է 7500 աշակերտ, ում կրթության ու դաստիարակության գործով զբաղվում է 1500 ուսուցիչ:

Ախալքալաքի մունիցիպալիտետի դպրոցների 708 անցած ուստարվա շրջանավարտներ, հաջողությամբ հանձնելով ավարտական քննությունները, ստացան ատեստատներ, եւ նրանցից շատերը՝ մոտ 200 հոգի, ցանկություն հայտնեցին սովորել Վրաստանի բուհերում: Պետք է ասել, որ այս թիվը տարեցտարի ավելանում է: Սա խոսում է դպրոցների լավ աշխատանքի մասին՝ թե' գիտական եւ թե' գաղափարական առումներով:

Շրջանավարտների մեջ ունեինք մեդալակիրներ, նաեւ լավագույն աշակերտներ, ովքեր պարգեւատրվեցին համակարգիչներով:

Սակայն, ցավով պետք է նշել այն փաստը, որ 708 շրջանավարտի փոխարեն, նոր ուստարում առաջին դասարան է ընդունվել 518 աշակերտ:

Դպրոցների 40 տնօրենները, հաջողությամբ անցնելով կրթության նախարարության հատուկ հանձնաժողովի կողմից անցկացվող հարցազրույց փուլն ու ստանալով դպրոցների հոգաբարձուների խորհրդի համաձայնությունը, նորից նշանակվեցին տնօրեններ: «Վրաստան» թերթի էջերից ուզում եմ շնորհավորել նրանց:

Մեր երկրի կրթության եւ գիտության նախարարությունը մեծ ուշադրություն է դարձնում դպրոցների վերանորոգման, նոր դպրոցների կառուցման եւ դպրոցները նորագույն տեխնիկական միջոցներով ապահովելուն:

Նախարարության կողմից ավարտված են Սուլդայի, Բոզալիի, Մյասնիկյանի, Ազմանայի, Քարծեպի, Կիրովականի, Խանդոյի ու Վարեւանի դպրոցների վերանորոգման աշխատանքները: Իսկ Բուղաշեն գյուղի երեխաներն իրենց ուսումնական տարին կսկսեն նորակառույց տիպային շենքում: 120 աշակերտի համար նախատեսված դպրոցը նախարարության նվերն է Բուղաշեն գյուղին:

Իսկ նոր ուստարում նախատեսված է դպրոցական շենքի շինարարություն Պրտենա գյուղում:

Բազմակողմանի կրթության եւ դաստիարակության համար հարկավոր է նյութատեխնիկական բազա. այդ իսկ պատճառով, կրթության նախարարությունը մեծ ուշադրություն է դարձնում դպրոցները գույքով, դասագրքերով եւ ժամանակակից տեխնիկական միջոցներով ապահովելուն:



Այսօր շրջանի բոլոր դպրոցներն ապահոված են անվճար դասագրքերով: Համապատասխան քանակի դասագիրք կա նաեւ մեզ մոտ՝ ռեսուրս-կենտրոնում, անհրաժեշտության դեպքում, դրանք եւս կտրամադրվեն դպրոցներին, իսկ եթե եղածն էլ չբավարարեց, կրթության նախարարությունը պատրաստ է ուղարկելու պահանջվող քանակի դասագիրք:

Իսկ ինչ վերաբերում է մայրենի լեզվի դասագրքերին, որոնք ստացվում են Հայաստանից, երկու երկրների նախարարների միջեւ կա համաձայնություն, եւ, հույս ունենք, որ մոտ ժամանակներս հայկական դպրոցների աշակերտները կունենան նաեւ մայրենի լեզվի դասագրքեր:

Շուտով կստացվեն նաեւ, «Իմ առաջին համակարգիչը» ծրագրի շրջանակներում, առաջին դասարանցիների համար համակարգիչներ:

Անցած ուստարում շատ դպրոցներ նախարարության կողմից ստացան աշակերտական գույք (սեղան-աթոռներ, գրատախտակներ), եւ այդ գործընթացը կշարունակվի նաեւ այս ուստարում:

Ամառվա ընթացքում այս ուսումնական տարվա համար նախարարությունը տեղադրեց վերջին սերնդի սարքավորումներ որակյալ ինտերնետ կապի համար:

Ամառվա ընթացքում դպրոցները սեփական միջոցներով ձեռք են բերել նաեւ դպրոցական փաստաթղթեր՝ դասամատյաններ, աշակերտական եւ ուսուցչական անձնական գործեր, դասղեկական, ամբիոնների աշխատանքի համար մատյաններ եւ այլ կարգի փաստաթղթեր:

Անցած ուստարում նախարարությունը 14 ուղղությունով հատկացրել էր անվարձ ավտոբուսներ աշակերտներին բազային դպրոցից միջնակարգ դպրոց տեղափոխելու համար: Այս տարի երթուղիների թիվը կավելանա:

Շատ ուսուցիչներ եւ աշակերտներ իրենց ամառային հանգիստը անցկացրին Անակլիայում եւ Բակուրիանիում: Իսկ տարվա ընթացքում աշակերտների համար կազմակերպվեցին էքսկուրսիաներ՝ Վրաստանի պառլամենտ ու արդարադատության նախարարություն:

Հաջողությամբ շարունակվում է նաեւ վրաց լեզվի ուսուցիչների գործուղման ծրագիրը: Անցած ուստարվա 18 դպրոցի փոխարեն, այս տարի նրանք կգործուղվեն 20 դպրոց:

Մեր դպրոցականները ակտիվ մասնակցություն են ցուցաբերում տարբեր տեսակի կոնկուրսներին ու օլիմպիադաներին, եւ մասնակիցների թիվը հետզհետե ավելանում է:

Քաղաքի թիվ 1 եւ թիվ 2 դպրոցների FLEX ծրագրի հաղթող 2 աշակերտ այսօր սովորում է ԱՄՆ-ում:

Շրջանի դպրոցներից շատերում բարձր հիմքերի վրա է դրված ֆիզիկական դաստիարակությունը: Ուզում եմ նշել մի քանի զգալի հաջողություններ:

Ախալքալաքի թիվ 1 դպրոցի աշակերտուհի Օքսաննա Ավետյանը դարձավ կարատեի աշխարհի չեմպիոն: Իսկ Կարտիկամի դպրոցի աշակերտները մեծ հաջողություններ են գրանցում բռնցքամարտի բնագավառում: Աշակերտներից մեկը, մասնակցելով Եվրոպայի չեմպիոնատին, նվաճեց 2-րդ տեղը, իսկ երկու աշակերտներ Վրաստանի ազգային հավաքականի կազմում են:

Քաղաքի դպրոցները ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին նաեւ ֆուտբոլի դպրոցական մրցաշարերին:

Կատարված աշխատանքները շատ են ու բազմաբնույթ. բոլորը թվարկել հնարավոր չէ, բայց վերը նշվածներից երեւում է, որ այսօր դպրոցը գտնվում է պետության եւ կրթության նախարարության հոգածության կենտրոնում, քանզի ուժեղ ու կայուն դպրոցն է վաղվա գրավականը:

Շատ կարեւոր է նաեւ առարկայական ու մասնագիտական վարժանքների կազմակերպումն ու անցկացումը: Նախարարության եւ ռեսուրս-կենտրոնի աշխատակիցների կողմից վարժաքներ են անցկացվել վրացերենի եւ անգլերենի, տարրական դասարանների ուսուցիչների, ինչպես նաեւ դպրոցների հաշվապահների համար:

Ուզում եմ շնորհակալական խոսք ասել նաեւ տեղական ինքնակառավարման մարմիններին՝ հանձինս Վրաստանի պառլամենտի մաժորիտար պատգամավոր Սամվել Պետրոսյանի, սակրեբուլոյի նախագահ Համլետ Մովսիսյանին եւ շրջանային վարչության նախագահ Էդուարդ Աղասարյանին ու բոլոր նրանց, ովքեր երեխաների կրթության ու դաստիարակության գործում այս կամ այն կերպ օգնել, աջակցել են դպրոցներին, շնորհակալություն նաեւ մանկավարժներին, ռեսուրս-կենտրոնին:

Ավարտելով խոսքս՝ ուզում եմ շնորհավորել մեր շրջանի եւ պետության բոլոր մանկավարժներին, կրթության ոլորտի աշխատողներին նոր ուստարվա կապակցությամբ. ցանկանում եմ բոլորին անսահման սեր ու նվիրվածություն իրենց գործին, ստեղծագործական նորանոր թռիչքներ, եւ ողջո՜ւյն նոր ուստարի...

*ՆԱՐՑԻՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*
*Ախալքալաքի ռեսուրս-կենտրոնի պետ*

Ð²ðò – ä²î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Üºð

²èúðº²Î²Ü

## ԻՆՉՊԵՍ ԱՎԵԼԻ ՔԻՉ ԳՈՒՄԱՐ ԾԱԽՍԵԼ ՄԹԵՐՔՆԵՐ ԳՆԵԼԻՍ



***Գաղտնիք չէ, որ ներկա պայմաններում սննդամթերքներ գնելու հնարավորությունը կենսական նշանակություն է ձեռք բերել, առավել եւս, երբ գործնականում ամեն ինչ թանկանում է: Ինչպե՞ս վարվել, որ հնարավորինս նվազեցվեն այդ նպատակով ծախսումները:***

***Վ. Կիրակոսյան***

***Թբիլիսի***

Ամենից առաջ, մինչեւ գնումների գնալը, ձեր պաշարների մի փոքրիկ ստուգում անցկացրեք. լրացուցիչ գնելու կարիք չկա, եւ «հինն» էլ ավելորդ չէ:

Կազմեք այն կերակուրների մոտավոր ցուցակը, որոնք պետք է պատրաստեք: Այդ ձեւով ավելի հեշտ կկողմնորոշվեք, թե ինչ բաղադրիչներ են անհրաժեշտ, եւ, գնումներ կատարելիս, կազատվեք ավելորդ մտքերից՝ «ուտելիքը բավականաչափ կլինի՞, թե՞ ոչ»: Կխուսափեք նաեւ «մեկ էլ տեսար՝ պատրաստեցի» մտայնությամբ տարբեր մթերքներ գնելու գայթակղությունից:

Իսկ շուկա ուղեւորվելիս՝ հիշեք, որքան երեկոյան կողմ գնաք, այնքան քիչ կծախսեք:

² è àÔæ ² ä ²ÐàôÂÚàôÜ

## ԱՌՈՂՋ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է ԿՈՓՎԵԼ



***Բոլորն ասում են՝ պետք է կոփվել, սակայն ոչ մեկը չի ասում, թե ինչպես: Գույե դո՞ւք օգնեք:***

***Տ. Հակոբյան***

***Բոլնիսի***

Բնականաբար, առողջ լինելու համար հարկ է կոփվել: Մարմինը կոփելը պետք է սկսել տաք շփումներից: Սրբիչը թրջեք շատ տաք ջրով եւ դրանով արագ շփեք ողջ մարմինը: Խոնավությունը վայրկենապես կգոլորշիանա՝ իր հետ տանելով տաքությունը եւ հովացնելով մաշկը: Այդ գործողությունը կրկնեք մի քանի անգամ: Այդպիսով, դուք կմարզեք անոթները, որոնք հաջորդաբար սեղմվում են եւ լայնանում՝ կարգավորելով ջերմափոխանակումը: Եթե զգաք, որ մրսում եք, ինտենսիվ սրբվեք չոր սրբիչով, տաք հագուստ հագեք ու բնակարանում արագ քայլեք:

**Թարմացնող զովություն**

Կոփման հաջորդ կարեւոր փուլը թարմ օդն է: Պարզապես լուսամուտը լայն բացեք, որպեսզի սենյակը լցվի սառը օդով: Երբ սենյակը ցրտի, պատուհանը փակեք եւ հագուստը հանեք: Փորձեք թուլանալ: Օդային լոգանքների տեւողությունը պետք է աստիճանաբար ավելացնել: Սկսեք 10-15 րոպեից եւ հասցրեք մինչեւ 2 ժամի: Փշաքաղվելու դեպքում, հագնվեք, բայց նստած մի մնացեք:

Այժմ, երբ արդեն սառը օդը ձեզ չի վախեցնում, անցում կատարեք սառցաջրին: Սկսեք շփումներից. սպունգը թրջեք սառը ջրի մեջ եւ դրանով շփեք ամբողջ մարմինը՝ սկսած ձեռքերից: Այնուհետեւ, մաշկը շփեք չոր սրբիչով: Այդ գործողությունից հետո մաշկը պետք է լավ կարմրի: Եթե այդ ընթացքում շատ եք մրսում, սկզբում միայն գոտկատեղից վերեւ ընկած հատվածները շփեք, նոր միայն հասեք ոտքերին (առանձին-առանձին):

Հաջորդ քայլը կոնտրաստ ցնցուղներն են (գոլից աստիճանաբար անցեք տաքի): Տաք ջրի տակ կանգնեք մոտավորապես 15 վայրկյան եւ կրկին գոլացրեք: Գործողությունը կրկնեք մի քանի անգամ: Ավարտեք սառը ցնցուղով եւ չոր սրբիչով շփեք մարմինը:

Կոնտրաստ ցնցուղին վարժվելուց հետո, անցեք սառը ցնցուղների: Ջերմաստիճանը նվազեցրեք աստիճանաբար՝ ավելացնելով ջրի տակ մնալու ժամանակը:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

## «ԳԵՐԼՈՒՍՆԻ» ԼՐԻՎ ԽԱՎԱՐՈՒՄԸ՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ



*Երկիր մոլորակի տարածաշրջանների մեծ մասի բնակիչները կկարողանան սեպտեմբերի 27-ին դիտել հազվագյուտ աստղագիտական երեւույթ՝ «գերլուսնի» լրիվ խավարումը:*

Ինչպես սեպտեմբերի 1-ին հաղորդել է ԱՄՆ-ի Օդագնացության եւ տիեզերական տարածության հետազոտման ազգային վարչությունը (NASA), վերջին անգամ դա տեղի է ունեցել 1982 թվականին, իսկ հետո կկրկնվի միայն 2033 թվականին:

NASA-ն հիշեցրել է, որ աստղագետները ոչ պաշտոնապես լիալուսնին «գեր» բնութագրումն են տալիս, երբ նա գտնվում է երկրամերձ կետում (պերիգեյում), այսինքն՝ Երկրից ամենամոտ հեռավորության վրա: Արեգակնային համակարգում երկնային մարմինների որոշակի դիրքի հետեւանքով, այս տարի այդ պահը համընկնում է Լուսնի լրիվ խավարման հետ:

Գերատեսչությունը նշել է, որ այս անգամ տեսարանն առանձնապես տպավորիչ կլինի, քանի որ «գերլուսինը» 14 տոկոսով ավելի մեծ եւ 30 տոկոսով ավելի պայծառ կերեւա:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԵՐԵԽԱՆ ԳՆԱՑ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ



***Ձեր երեխան արդեն 6 տարեկա՞ն է: Դա նշանակում է, որ նա այլեւս այն փոքրիկը չէ, որը ծնողներին ընդունում է անվերապահ հիացմունքով ու լիարժեք վստահությամբ, սակայն նա նաեւ դեռահաս չէ, որը մասամբ մեկուսանում է ծնողներից:***

Մի կողմից նա ցանկանում է, որ իրեն մեծի տեղ դնեն, իսկ մյուս կողմից էլ ավելի զգայուն է դառնում ծնողական սիրո դրսեւորումների նկատմամբ: Կյանքում առաջին անգամ նրան գնահատում են սահմանված գնահատման համակարգով, չէ՞ որ դպրոցում ստացած գնահատականները նրա համար որոշակի իմաստ ունեն՝ ինքը լա՞վն է, թե՞վատը: Այս բոլորը նրա կյանքում որոշակի դժվարություններ են առաջացնում: Դրանք հաղթահարելը նրա համար հեշտ է լինում, եթե զգում է ամուր թիկունքի՝ ծնողական սիրո եւ պաշտպանության առկայությունը:

Հենց դպրոցում է երեխան հայտնվում ինքնատիպ «ջունգլիում»: Հենց 6-7 տարեկանում է սկսվում լիարժեք դաստիրակությունը, բնավորության կազմավորումը, կյանքի սցենարի ձեւավորումը: Դրանում իսկայական դեր ունեն ծնողները: Երբ ձեր երեխան դպրոց է ուղեւորվում, նրա համար կարեւոր գործոն է դառնում ուշադրությունը: Ծնողները ճիշտ դաստիարակությանն ուշադրություն պետք է հատկացնեն, որպեսզի երեխան բարությամբ համակվի, այլ ոչ թե չարությամբ, որն իր շուրջ բավական շատ է:

Կարեւոր է հաջողությունների համար երեխային անպայման գովելը (գնահատականների, դասերի ժամանակ ցուցաբերած ակտիվության, տնային աշխատանքները կատարելու):

Նաեւ կարեւոր է չպատժելը: Մտրակը ոչ թե պետք է պատժիչ լինի, այլ խթանիչ: Պատիժը երեխայի մեջ վախ է առաջացնում: Այն անհատը, որը վախենում է, երբեք բարձունքի չի ձգտի եւ իր վրա պատասխանատվություն չի վերցնի: Ավելի արդյունավետ է մտածողության մեջ ամրակայել «հաջողություն՝ հատուցում» կապը: Օրինակ, «Մենք քեզ փլեյեր կգնենք, եթե դու այս քառորդում մաթեմատիկայից միայն բարձր գնահատականներ ստանաս»: Դա ոչ միայն ուսման նկատմամբ պատասխանատվության մակարդակը կբարձրացնի, այլեւ երեխայի մեջ կենսականորեն անհրաժեշտ այլ որակներ կզարգացնի՝ նպատակայնություն, նվաճումների համար կամք, կարգապահություն եւ արդյունքի վրա կենտրոնանալու ունակություն:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴ

## ԼԱՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ



* Ամեն օր մի այնպիսի բան արեք, որն անելու համար վճռականություն է պետք:

* Նախանձը հեռո՛ւ վանեք:

* Հիշեք այն հաճոյախոսությունները, որոնք ստանում եք: Մոռացե՛ք վիրավորանքները:

* Պահպանեք հին նամակները, բայց դեն շպրտեք բանկային հին հաշիվները:

* Հանգիստ ընդունեք այն ամենը, ինչը հնարավոր չէ փոխել:

* Եթե դուք իմանայիք, թե միտքը որքան հզոր է, երբեք բացասական ոչ մի միտք չէիք հղանա:

* Ամենաբարդ քայլն այն քայլն է, որը մեզ բաժանում է սովորության ուժ ձեռք բերած քայլերից:

* Գեղեցիկ մտքեր ունեցեք: Մեր ընտրած մտքերը նման են այն գույներին, որոնցով նկարում ենք կյանքի կտավի վրա:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Սոսկ կյանքի բացերը, թերի կողմերն ու ցավերը նկարագրելն ու մի կողմ կանգնելը արվեստ չեն:

***ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ***
***(1915-1998)***
***Հայ գրող***

Գիտությունը ամեն բանի համ է տալիս՝ աղ է ասես:

***ԴԱՎԻԹ ԳՈՒՐԱՄԻՇՎԻԼԻ***
***(1705-1791)***
***Վրաց բանաստեղծ***

Մենք հաճախ ճշմարտությունը չենք ասում, որպեսզի ինքներս չլսենք այն:

***ՊՈՒԲԼԻԼԻՈՍ ՍԻՐՈՍ***
***(մ.թ.ա. առաջին դար)***
***Հռոմեացի բանաստեղծ***

Ոչ մի բան ավելի տանջալից չէ իմաստուն մարդու համար եւ ոչ մի բան նրան ավելի մեծ անհանգստություն չի պատճառում, քան ավելի շատ ժամանակ վատնելու անհրաժեշտությունը դատարկ ու անօգուտ բաների վրա, որոնք արժանի չեն դրան:

***Պլատոն***
***(մ.թ.ա. 428/427 – 348/347 թթ.)***
***Հին հույն փիլիսոփա***

Դժվար է հավատալ, որ մարդը ձեզ ճշմարիտն է ասում, երբ դուք գիտեք, որ նրա տեղը դուք կստեիք:

***ՀԵՆՐԻ ՄԵՆՔԵՆ***
***(1880-1956)***
***Ամերիկացի գրող***

Ժամանակը թանկ է, սակայն ժամանակից թանկ է ճշմարտությունը:

***ԲԵՆՋԱՄԻՆ ԴԻԶՐԱՅԵԼԻ***
***(1804-1881)***
***Անգլիական պետական եւ քաղաքական գործիչ***

Տղամարդուն հարկավոր է երկու բան՝ խաղ եւ պատերազմ:

Դրա համար տղամարդն ընտրում է կնոջը՝ որպես խաղալիք եւ հակառակորդ:

***ՖՐԻԴՐԻԽ ՆԻՑՇԵ***
***(1844-1900)***
***Գերմանացի փիլիսոփա***

Եթե գոյություն չունենային այնպիսի կետեր, որտեղ չհատվեին բոլորի շահերը, խոսք անգամ չէր կարող լինել որեւէ հասարակության մասին:

***Ժան Ժակ Ռուսո***
***(1712-1778)***
***Ֆրանսիացի փիլիսոփա***

Չկան այնպիսի կանայք, ովքեր ծաղիկներ չեն սիրում: Պարզապես կան տղամարդիկ, ովքեր դա այդպես են համարում:

***ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

² Ü º Î ¸ à Î Ü º ð

** - Թանկագինս, ես քո ծննդյան օրվա առթիվ շքեղ նվեր եմ պատրաստել:*

*-Դե', էլ ինչի՞ ես սպասում, ցույց տուր:*

*- Սպասիր, հիմա կհագնեմ:*

** - Մատուցող, լանգետն այնքան փոքրիկ է, որ ես այն միանգամից կուլ կտամ:*

*- Սխալվում եք, մեր լանգետը դուք կծամեք ուղիղ կես ժամ:*

** Բժիշկը դիմում է հիվանդին.*

*- Դուք վիրահատվե՞լ եք:*

*- Այո, դա ինձ վրա 1000 դոլար նստեց:*

*- Ես դրա մասին չեմ հարցնում: Ձեզ ի՞նչն էր անհանգստացնում:*

*- Ես ընդամենը 700 ունեի:*

*- Դուք նորից չհասկացաք: Ես ուզում եմ հասկանալ՝ ի՞նչ բողոքներ ունեք:*

*- Վիրահատությունը շատ թանկ էր...*

** - Բժի'շկ, հիշո՞ւմ եք 8-րդ հիվանդասենյակի այն մարդուն, որ հիվանդ էր ձեւանում:*

*- Եվ ի՞նչ:*

*- Մահացավ:*

** - Բժիշկ, այն դեղահաբերը, որ խորհուրդ էիք տվել, ինձ շատ օգնեցին:*

*- Ինչ կա որ, երբեմն այդպես էլ է պատահում:*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԵՐԿԿՈՂՄ ԵՎ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ



*Սեպտեմբերի 7-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, աշխատանքային այցի շրջանակներում, Մոսկվայում հանդիպեց ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:*

Հանդիպմանը երկու երկրների նախագահները քննարկեցին երկկողմ եւ բազմակողմ ձեւաչափերով հայ-ռուսական համագործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ: Մասնավորապես, անդրադառնալով ռազմավարական գործընկեր երկու երկրների միջեւ քաղաքական, տնտեսական, հումանիտար ոլորտներում, ինչպես նաեւ ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությունից հետո ինտեգրացիոն գործընթացների շրջանակում համագործակցությանը վերաբերող հարցերին, նախանշեցվին հարաբերությունների առավել ամրապնդման ու խորացման ուղղությամբ հետագա աշխատանքները:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին շնորհակալություն հայտնեց Գյումրիում Ավետիսյանների 7 հոգուց բաղկացած ընտանիքին սպանած ռուս զինծառայող Վալերի Պերմյակովի գործը հայ իրավապահներին հանձնելու կապակցությամբ:

Սերժ Սարգսյանն ու Վլադիմիր Պուտինը մտքեր փոխանակեցին նաեւ միջազգային եւ տարածաշրջանային արդի խնդիրների ու մարտահրավերների շուրջ՝ այդ համատեքստում անդրադարձ կատարելով ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի ներկա փուլին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ

*Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի քարտուղար Ֆիլիպ Համոնդի հետ հանդիպումով սեպտեմբերի 9-ին մեկնարկեց Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնական այցելությունը Միացյալ Թագավորություն:*

Նախարարներն անդրադարձել են Հայաստան-Եվրոպական միություն հարաբերություններին, համագործակցության իրավական նոր հենքի ստեղծման ուղղությամբ իրականացվող քայլերին, հանգամանալից մտքեր փոխանակեցին Մերձավոր Արեւելքում տիրող իրավիճակի, սիրիական ճգնաժամի եւ դրա կարգավորման ուղիների, ահաբեկչության դեմ ուղղված միջազգային հանրության պայքարին, Իրանի միջուկային ծրագրի շուրջ ձեռք բերված համաձայնություններին եւ դրա հետ կապված զարգացումներին:



Այցի շրջանակներում, Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպումներ ունեցավ Մեծ Բրիտանիայի մշակույթի եւ մեդիայի պետքարտուղար Ջոն Ուիթինգդեյլի, Լորդերի պալատի անդամներ Քերոլայն Քոքսի եւ Հենրի Հարիսոնի, պաշտոնական այլ անձանց հետ:

## ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ «ՇԱՆԹ-2015» ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Համապետական նշանակության «Շանթ-2015» զորավարժությունը պլանային բնույթի է եւ նպատակաուղղված է պաշտպանությանը պետության անմիջական նախապատրաստության եւ ագրեսիայի հետմղման ընթացքում պետական ու ռազմական կառավարման մարմինների զորահավաքային նախապատրաստության, պատրաստականության բարձր աստիճանների բերման ունակության վերստուգմանը, փոխգործակցության եւ գործողությունների ներդաշնակության մակարդակի բարձրացմանը:*

Բաղրամյան ուսումնավարժադաշտում «Շանթ-2015» ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժությունների շրջանակներում, տեղի ունեցավ զորավարժության վերջին միջոցառումը, որի ընթացքում, պայմանական ռազմական դրության ժամանակ, հայկական զինված ուժերը մարտի դաշտում պետք է հաղթեն հակառակորդին:

Զորավարժությանը ներկա են Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը, կառավարության ներկայացուցիչներ:

Զորավարժության ընթացքում ներկայացվեց հայ-լեհական համատեղ «Լյուբավա-Արմենիա» ձեռնարկության արտադրանքը: Ներկայացվեցին նաեւ «Իգլա-Ս», «Սմերչ», «Բուկ», «Օսա», «Օսա-ակա» զինատեսակները, անօդաչու սարքեր եւ փրկարարական տեխնիկա:

## ԳԱԶԸ ԷԺԱՆԱՑՎՈՒՄ Է 24 ԴՈԼԱՐՈՎ

*ՌԴ էներգետիկայի ու Հայաստանի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունները համաձայնագիր են ստորագրել Հայաստան ռուսական գազի գնի փոփոխության վերաբերյալ: Հայաստան մտնող 1000 խմ գազի գինը 189 դոլարից կդառնա 165 դոլար:*

Կողմերը ստորագրել են նաեւ արձանագրություն «Արմգազպրոմ» ընկերության բաժնեմասերի գնման եւ հետագա գործունեության մասին փոփոխությունների անցկացման վերաբերյալ: Համաձայն փաստաթղթի, հայկական կողմը պարտավորվում է ապահովել տնտեսական արդյունավետ աշխատանք ինչպես երկրի շուկայում, այնպես էլ՝ արտահանման առնչությամբ:

ՌԴ էներգետիկայի նախարար Ալեքսանդր Նովակը հայտարարել է, որ ընթացիկ տարվա առաջին կիսամյակում Հայաստան առանց մաքսային տուրքի արտահանվել է 70000 տոննա նավթամթերք եւ 1 մլրդ խմ բնական գազ:

## ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԱՎԵԼԱՑՎԵԼ ԵՆ

*Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները 2015 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, ավելացել են 18,5 հազար հեկտարով եւ կազմել 351,3 հազար հեկտար՝ վարելահողերի օգտագործման մակարդակը հասցնելով 78,5 տոկոսի:*

2010-2014 թվականներին ցանքատարածություններն ավելացել են շուրջ 50 հազար հեկտարով: Այս մասին սեպտեմբերի 9-ին հայտնեց Հայաստանի գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը:

«Հացահատիկային մշակաբույսերի արտադրության ծավալները 2014 թվականին գերազանցել են 2010 թվականի մակարդակը 81 տոկոսով, իսկ բերքատվությունը բարձրացավ շուրջ 54 տոկոսով: Ցորենի արտադրության ծավալները նշված ժամանակահատվածում ավելացել են ավելի քան 84 տոկոսով, իսկ բերքատվությունը՝ 52,4 տոկոսով»,- նշեց Սերգո Կարապետյանը:

Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, ընթացիկ տարվա հունվար-հուլիսին գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 328,4 միլիարդ դրամ, որը 14,8 տոկոսով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը, ընդ որում՝ բուսաբուծության ճյուղում աճը կազմել է 28,6 տոկոս, իսկ անասնապահությունում՝ 4,2 տոկոս: Նշված ժամանակահատվածում, բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է 145.4, իսկ անասնաբուծությանը՝ 183.0 միլիարդ դրամ:

## ՆՇՎԵՑ «ԳՅՈՒՄՐԻԻ ՕՐԸ»



*Գյումրեցիները սեպտեմբերի 5-ին հերթական անգամ նշեցին «Գյումրիի օրը»: Ամենամյա տոնակատարության շրջանակներում, միջոցառումներ անցկացվեցին քաղաքի տարբեր թաղամասերում:*

Ավանդական նշվող միջոցառումներից այս տարի կրկին առանձնացվեցին Հացի եւ Արհեստների փառատոները: Տոնակատարության մեկնարկն ազդարարվեց Գյումրիի Ջիվանու փողոցից. փողոցը ոչ միայն ասֆալտապատվել է, այլ նաեւ հիմնանորոգվել է: Փողոցի հանդիսավոր բացմանը ներկա հյուրերի համար կազմակերպվել էր թատերականացված պատկեր ու հյուրասիրություն: Գյումրեցի հայտնի «Պոլոզ Մուկուչը» Աժ պատգամավորներին, մարզպետին ու քաղաքապետին, ինչպես նաեւ քաղաք այցելած մյուս հյուրերին դիմավորեց ոչ միայն գյումրեցուն հատուկ հումորով, այլ նաեւ սառը գարեջրով:

Տոնի շրջանակներում, քաղաքում անցկացվող մյուս միջոցառումները մշակութային էին:

«Գյումրիի օր» միջոցառումը նշվում է 13-րդ անգամ: Նախկինում միջոցառումը նշվում էր հոկտեմբերին, սակայն, հաշվի առնելով եղանակային պայմանները, այս տարի, ավագանու որոշմամբ, այն նշվեց սեպտեմբերին:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԷՐ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՑԸ

***Սեպտեմբերի 5-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին:***

***Հանդիպման ընթացքում քննարկվել են վերջին օրերին հայ-ադրբեջանական պետական սահմանին եւ ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում տիրող իրավիճակի հետ կապված հարցեր:***

***Անդրադարձ է եղել նաեւ ս.թ. սեպտեմբերի 3-6-ն անցկացվող «Շանթ-2015» ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժություններին եւ դրանց նպատակին:***

### ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

***Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով, Արփինե Հովհաննիսյանը նշանակվել է Հայաստանի արդարադատության նախարար:***

***Սեպտեմբերի 5-ին Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը արդարադատության նախարարության աշխատակազմին ներկայացրեց Հայաստանի արդարադատության նորանշանակ նախարար Արփինե Հովհաննիսյանին:***

***Վարչապետը նշեց, որ, Արփինե Հովհաննիսյանին նախարար նշանակելիս, Հայաստանի նախագահի հետ հաշվի են առել նրա փորձառությունը, մասնագիտական գիտելիքներն ու անաչառությունը: Հովիկ Աբրահամյանը համոզմունք է հայտնել, որ, նախարարության մասնագիտական թիմի հետ միասին, նորանշանակ նախարարը կլուծի ոլորտի առջեւ դրված խնդիրները, կիրականացնի կառավարության ծրագրով նախատեսված բարեփոխումները:***

### 200 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՎԱՐԿ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

***Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանին 200 միլիոն դոլարի վարկ կտրամադրի: Ինչպես նշել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը. «Ստորագրվել է համաձայնագիր, որի համաձայն, ՌԴ-ն Հայաստանին կտրամադրի 200 միլիոն դոլարի արտոնյալ վարկ, եւ դա թույլ կտա թարմացնել հայկական զինված ուժերի զինանոցը»:***

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԿԱԶԱՏՎԵՆ 30 ՕՐ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆԳՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻՑ

***Աշխատանքային գործունեություն իրականացնելու կամ աշխատանքի տեղավորվելու նպատակներով Բելառուս ժամանած Հայաստանի քաղաքացիները եւ նրանց ընտանիքների անդամները կազատվեն 30 օր հաշվառման կանգնելու պարտավորությունից: Նույն որոշումը կգործի նաեւ Բելառուսի քաղաքացիների՝ Հայաստան ժամանելու դեպքում:***

***Այդ նպատակով, Հայաստանի եւ Բելառուսի կառավարությունների միջեւ կկնքվի քաղաքացիների առանց արտոնագրերի փոխայցելությունների մասին 2002 թվականի հունիսի 6-ի համաձայնագրում լրացումներ կատարելու մասին» արձանագրություն:***

### ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ ՀԱՅ ՍԱՆՀՐԱՀԱՆԳԻՉՆԵՐԻ

***Հայաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսն ու Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը ներկա են գտնվել ԱՄՆ զինված ուժերի կողմից հայ սանհրահանգիչների պատրաստման համար դասախոսական կազմի նորարարական ուսումնական դասընթացի ավարտական միջոցառմանը: Ինչպես հայտնեցին Հայաստանում ԱՄՆ դեսպանությունից, դասընթացի առաջին հայ շրջանավարտները 12-ն են: Վերջին երեք ամիսների ընթացքում, ԱՄՆ ցամաքային ուժերի 6 զինծառայողներ դասընթացներ են անցկացրել հայ գործընկերների համար, ովքեր սկսելու են ծառայել որպես հրահանգիչներ Հայաստանի զինված ուժերի ռազմական բուժակների դպրոցում:***

ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱԿԱՆԱՏԵՍԻ ԱՉՔԵՐՈՎ

*«Հայարտուն» կենտրոնում կայացավ Հայոց ցեղասպանության ականատես, թբիլիսցի, երջանկահիշատակ Լեւոն Դիլբարյանի «Հուշեր անցյալից» գրքի շնորհանդեսը:*



Միջոցառումն իրականացավ «Հայկական գիտա-հետազոտական կենտրոն Վրաստանում» (ՀԳՀԿՎ) ոչ կառավարական կազմակերպության նախաձեռնությամբ եւ Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի աջակցությամբ: Այն նվիրված էր Հայոց ցեղասպանության նահատակների 100-րդ տարելիցին: Շնորհանդեսին ներկա էին նաեւ գրքի հեղինակի դուստրը, թոռներն ու հարազատները:

ՀԳՀԿՎ նախագահ Էմմա Ախտյանը իր բացման խոսքում ընդգծեց այն պատասխանատվության եւ պատրաստակամության մասին, որով կենտրոնը կազմակերպեց գրքի (այն լույս է տեսել հայերեն եւ ռուսերեն), խմբագրումը, թարգմանությունն ու հրատարակությունը:

Ելույթ ունեցողները շնորհակալություն հայտնեցին Վիրահայոց թեմին եւ նրա առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանին, ՀԳՀԿՎ-ի նախագահ Էմմա Ախտյանին, Գիսանե Հովսեփյանին, գրքի խմբագիրներ Աննա Սարիբեկյանին եւ Եվգենյա Խաչատուրովայիին, թարգմանչուհի Վերոնիկա Հարությունյանին կարճ ժամանակամիջոցում գիրքը հրատարակելու գործը իրականացնելու համար:

*ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ*

ՆՈՐ ՈՒՍՏԱՐՎԱՆ ԸՆԴԱՌԱՋ

# «ՍՈՒՐԲ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ» ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐ ՍԱՆԵՐԻՆ

*2015 թվականի սեպտեմբերի 8-ին, Վիրահայոց թեմի «Սուրբ Մովսես Խորենացի» նախակրթարանում մեկնարկեց 2015-2016 ուսումնական տարին:*



Վաղ առավոտից ուրախ աշխուժություն էր տիրում Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցու բակում: Գույնզգույն ծաղկեփնջերով շուրջ 50 հայ մանուկներ՝ իրենց ծնողների հետ, ուսուցիչների ուղեկցությամբ եկել էին մասնակցելու առավոտյան ժամերգությանը եւ ստանալու Վիրահայոց թեմի առաջնորդի օրհնությունը:

Հավարտ ժամերգության, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն օրհնության ու գնահատանքի խոսքով դիմեց ներկաներին, շնորհավորեց նոր ուսումնական տարվա առթիվ եւ բարեմաղթեց առողջություն, հետաքրքիր ու հաջողակ օրեր: Սրբազան Հայրը պատգամեց նախորդ տարիների նման մանուկների օրը նախակրթարանում սկսել առավոտյան ժամերգությանը մասնակցությամբ: Առաջնորդը քաջալերեց ծնողներին, ովքեր քաղաքի տարբեր ծայրամասերից իրենց փոքրիկներին բերում են հատկապես այս նախակրթարանը՝ համոզմունքով, որ այստեղ է դրվում հոգեւոր եւ հայեցի դաստիարակության հիմքը:

Այս տարի նորեկների թիվը հասել է 20-ի, եւ ակնկալիք կա, որ այդ թիվը կավելանա:

«Հայարտուն» կենտրոնի տնօրեն Լեւոն Չիդիլյանը նշեց, որ հիմնադրումից հետո, անցած չորս տարիների ընթացքում, նախակրթարանը 40-ից ավելի երեխայի է ուղղորդել մայրաքաղաքի հայկական դպրոցներ:

ՍՊՈՐՏ

## ԲԱՍԿԵՏԲՈԼ. ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ 1/8-ՐԴ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼՈՒՄ

*Վրաստանի բասկետբոլի հավաքականը նվաճեց Եվրոպայի առաջնության մեկ ութերորդ եզրափակիչ փուլում հանդես գալու իրավունք:*

Նշենք, որ Վրաստանի թիմը առաջնության մեկնարկում երեք անընդմեջ պարտությունից (Հոլանդիայից՝ 72-73, Սլովենիայից՝ 68:79, Հունաստանից՝ 68:79 հաշիվներով) ապա, առավելության հասնելով Մակեդոնիայի (90:75) եւ Խորվաթիայի (71:58) հավաքականների նկատմամբ, նվաճեց մեկ ութերորդ եզրափակչի ուղեգիրը: Վաղը՝ սեպտեմբերի 13-ին, ֆրանսիական Լիլ քաղաքում կանցկացվի առաջնության մեկ ութերորդ եզրափակչի Վրաստան-Լիտվա հանդիպումը:

## ՖՈՒՏԲՈԼ. ԽԱՂԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԵՌՈՒ Է ԵՎՐՈՊԱԿԱՆԻՑ

*Ֆուտբոլի Եվրոպայի 2016 թվականի առաջնության ընտրական փուլի շրջանակներում, երկուական հանդիպումներ անցկացրին Վրաստանի եւ Հայաստանի հավաքականները:*

Վրաստանի թիմը սեփական հարկի տակ, 1:0 հաշվով, պարտության մատնեց Շոտլանդիայի հավաքականին, ապա մրցակցի դաշտում նվազագույն՝ 0:1 հաշվով զիջեց Իռլանդիայի թիմին:

Հայաստանի հավաքականը մրցակցի դաշտում, 0:2 հաշվով, պարտություն կրեց Սերբիայի թիմից, իսկ հաջորդ հանդիպմանը, սեփական դաշտում, գրոյական՝ ոչ-ոքի խաղաց Դանիայի թիմի հետ:

Վրաստանի հավաքականի հաջորդ հանդիպումները կկայանան հոկտեմբերի 8-ին եւ 10-ին: Առաջին խաղում Վրաստանի հավաքականը կհյուրընկալի Ջիբլարթարի թիմին, իսկ երկրորդում՝ մրցակցի դաշտում ուժերը կչափի Գերմանիայի թիմի հետ:

Հայաստանի հավաքականը հոկտեմբերի 11-ին իր դաշտում կհանդիպի Ալբանիայի թիմին:

ՓԱՌԱՏՈՆԵՐ

# «ՈՍԿԵ ԾԻՐԱՆԸ»՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*«Ոսկե ծիրան» երեւանյան միջազգային կինոփառատոնն արդեն 8-րդ անգամ Հայաստանից հյուրընկալվեց Ախալքալաքիում:*

«Ոսկե ծիրանը անիվների վրա» ծրագրի շրջանակներում, սեպտեմբերի 8-11-ը Ախալքալաքիում ցուցադրվում են կինոփառատոնի ֆիլմերի ընտրանին եւ Վրաստանի ազգային կինոկենտրոնի կողմից վերջին տարիներին ստեղծված լավագույն ֆիլմերը: Սեպտեմբերի 8-ին Ախալքալաքիի «Ոսկե Ծիրան» կինոդահլիճում տեղի ունեցավ կինոփառատոնի բացման հանդիսավոր արարողությունը:

Փառատոնի նախագահ Հարություն Խաչատրյանն իր ողջույնի խոսքում, կարեւորելով կինոյի դերը մարդկանց կյանքում, ախալքալաքցիներին կոչ արեց այցելել կինոսրահ:

Տարիներ շարունակ, Ախալքալաքիի կինոփառատոնի ցուցադրություններին աջակցելու համար, «Ոսկե Ծիրան» կինոփառատոնի պատվոգրերով պարգեւատրվեցին՝ Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սամվել Պետրոսյանը, Ախալքալաքիի վարչության նախագահ Էդուարդ Աղասարյանը, Ախալքալաքիի շրջանային ժողովի նախագահ Համլետ Մովսիսյանը եւ Ախալքալաքիի շրջանային ժողովի փոխնախագահ Նաիրի Իրիցյանը:

Սեպտեմբերի 9-ի ցուցադրությունն ազդարարվեց վրաց կինոռեժիսորներ Գիորգի Օվաշվիլու «Եգիպտացորենին կղզին», Մարգո Զուբաշվիլու «Դինոզավր», Բեսո Սոլոմոնիշվիլու «Պայթուցիչ», Մարիամ Խաչվանի «Դինոլա» ֆիլմերով, որոնց հաջորդեցին Հարություն Խաչատրյանի «Անվերջ փախուստ, հավերժ վերադարձ» ու Սերժ Ավետիքյանի «Շների կղզին» եւ ուրիշների ֆիլմերը: Այս օրերին բացօթյա ցուցադրվեցին նաեւ Դավիթ Սահակյանցի «Անահիտ», Արամ Շահբազյանի «Փրկության քարտեզ», Հենրիկ Մալյանի «Նահապետ» եւ Սյուզան Խարտալյանի «Տատիկին դաջվածքները» ֆիլմերը:

# ԳՐԱՖԻՏԻ ՓԱՌԱՏՈՆԸ ԱԽԱԼՔԱԼԱՔՈՒՄ

*Սեպտեմբերի 10-ին, Ախալքալաքիում տեղի ունեցավ «Հանուն խաղաղ հարեւանության» խորագրով փողոցային արվեստի փառատոնի փակման արարողությունը:*

Փառատոնի փակման արարողությանը ՋԱՀ-ի Ախալքալաքիի գրասենյակում ներկա էին տեղական իշխանության ներկայացուցիչներ, Երեւանից ու Թբիլիսիից ժամանած հյուրեր, արվեստագետներ, մտավորականներ, հասարակական գործիչներ:

Միջոցառման մասնակիցները կարեւորեցին Ախալքալաքիում նման փառատոնի անցկացման նախաձեռնությունը թե՛ մշակութային դաստիարակության, թե՛ քաղաքի գրավչության բարձրացման, թե՛ երիտասարդների ակտիվության ու փորձի փոխանակման գործում: Կազմակերպիչները պատրաստակամություն հայտնեցին շարունակել նմանատիպ միջոցառումների անցկացումը:

Փառատոնի սկզբին ծրագրին մասնակից շուրջ 20 երիտասարդների համար Ախալքալաքիում անցկացվեց մասնագիտական սեմինար-թրեյնինգ: Այս ծրագրի շրջանակներում վրացի ու հայ երիտասարդ նկարիչները ընկերացել են եւ փոխանակվել մասնագիտական հմտություններով:



## ԽԱՉԲԱՌ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 1.Երգչուհի ... Պիեխա: 5.Անանուխ, նանա: 8.Հայ պատմիչ ... Արծրունի: 9.Ե՛վ մայրցամաք, ե՛ւ աշխարհամաս: 11.Աստղերի խումբը: 13.Թբիլիսիի ...-յի ներկայացուցիչների կազմ: 17.Տնային տնտեսուհու առօրյա գործերից: 20.Շիվ, ճյուղ: 21.Հայաստանը՝ հարեւանների լեզվում: 23.Եվրոպայի դրամական միավորը: 25.Ալկոհոլային խմիչք: 28.Արգենտինական պար: 29.Անֆիլտր ծխախոտ: 31.Ոչ հայտնի: 32.Քաղաք Ռուսաստանում: 36.Ակսել Բակունցի հերոսներից: 37.Ֆուտբոլիստ ... Անդրեասյան: 39.Տանուտեր, ներկայիս գյուղապետը: 40.Լարային գործիք: 42.Հայերենի փոքրացնող վերջածանց: 43.Գետ Հայաստանում: 45.Տնտեսագիտության պրոֆեսոր, թբիլիսահայ Սաֆարյանը: 47. Քաղաք Ամերիկայում ... Աջելես: 48.Քաջ, խիզախ: 50.Արժեք, գին: 53.Ճակատի կնճիռ: 54.Ճիճու: 55.Արամ Խաչատրյանի հայտնի բալետներից: 57.Գրական ստեղծագործություն: 58.Մրգատու ծառատեսակ:

**ՈՒՂՂԱՁԻԳ.** 2.«Նա զուրկ է ...ից»: 3.Թբիլիսյան ... արեւ: 4.Ասիական պետություն: 6.... Մատաղա: 7.Մեծաբալթյան ազգ: 10.Ազնիվ, շիտակ: 12.Ե՛վ մազի, ե՛ւ հատակի: 14.Ծովափնյա քաղաք Վրաստանում: 15.Հայ բանաստեղծ: 16.Շամբ, շաքարի հումք: 18.Հայաստանի մայրաքաղաքներից: 19.Գավազան, ձեռնափայտ: 22.Ժամանակի միավոր: 24.Ռուսաստանի մայր գետը: 26.Առողջարանային քաղաք ՌԴ Կրասնոդարի երկրամասում: 27.Հովհ.Թումանյան «... որսկանը»: 28.Գինու աման, կարաս: 30....գաղաթ, ...կառել: 33.... Վեգաս: 34.Հում, չեփած: 35.Դժբախտ լուր, գույժ: 37.Բանջարանոցի գետը: 38.Դենի ...: 41.Ցուցական դերանուն: 43.Համադասական շաղկապ: 44.Բուժիչ բույս: 46.Քաղաք Նիդերլանդներում: 48.«Ա՜խ, յարս ինձի ... թողեց ու գնաց» (Ավ.Իսահակյան): 49.Ոդիսեւսի կղզին: 50.Փոխադրամիջոց գյուղում: 51.Կոթ, բռնելու մաս: 52.... Ջորջ Գորդոն Բայրոն: 56.Լծկան անասուն:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 7.Մաեստրո: 9.Իրարու: 10.Աhեղ: 11.Անարգում: 13.Բորակ: 16.Դրա: 17.Նառ: 19.Հոսել: 22.Պիեխա: 24.Նարինե: 25.Առկա: 27.Դյուրեր: 29.Քառակի: 32.Ատակամա: 33.Երկյուղ: 35.Դարդ: 37.Երկ: 39.Մարգո: 40.Գեղմ: 43.Գեղ: 44.Կազմ: 47.Լիա: 49.Քիշնեւ: 50.Շտապ: 53.Հասու: 54.Էդի: 55.Տացու: 57.Շեջ: 58.Կյուրեղ:

**ՈՒՂՂԱՁԻԳ.** 1.Ռաունդ: 2.Աստրա: 3.Բրաուն: 4.Ծիղբ: 5.Չաիր: 6.Սունկ: 8.Ոհմակ: 12.Արմե: 14.Ոլոր: 15.Ադեն: 18.Կառե: 19.Հասակ: 20.Սիրամարգ: 21.Լեղի: 23.Խարույկ: 26.Կրաղ: 28.Յուրե: 29.Քամ: 30.Ռադա: 31.Կարգել: 34.Կրիզիս: 36.Դող: 38.Ուղի: 41.Ելեւէջ: 42.Մաշիկ: 45.Աքար: 46.Աշուշ: 48.Հատու: 51.Պար: 52.Քուղ: 56.Ցե:

Խմբագիր՝
ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445